**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

**ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԹԻՎ 11 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ Հ. ԲԻՇԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ԴԻՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Ընդունել ի գիտություն, որ ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով թիվ 11 ընտրատարածքի պատգամավորության թեկնածու Հ. Բիշարյանը, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 33 հոդվածի 1-ին մասի, 2007 թվականի հունիսի 12-ին դիմել է սահմանադրական դատարան՝ խնդրելով վերադարձնել 2007թ. մայիսի 24-ին սահմանադրական դատարան ներկայացրած՝ «ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին թիվ 11 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» թիվ 11 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2007 թվականի մայիսի 14-ի թիվ 5-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ իր դիմումը:

2. Այդ կապակցությամբ, ուժը կորցրած համարել ՀՀ սահմանադրական դատարանի 2007 թվականի մայիսի 31-ի «ՀՀ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով թիվ 11 ընտրատարածքի պատգամավորության թեկնածու Հ. Բիշարյանի դիմումի հիման վրա՝ «ՀՀ Ազգային ժողովի ընտրություններին թիվ 11 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրվելու մասին» թիվ 11 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2007 թվականի մայիսի 14-ի թիվ 5-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ» ՍԴԱՈ-72 աշխատակարգային որոշումը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՆԴԱՄ** **Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

13 հունիսի 2007 թվականի
ՍԴԱՈ - 87